**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-6**

ք.Երևան «08» «04» 2026թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Լայթս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գոհար Խանվելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 02.02.2026թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-6 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.8 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով Վաճառող կազմակերպության՝ «Լայթս» ՍՊԸ-ի 09.04.2026թ.-ի գրությունը՝ մատակարարման ժամկետի երկարաձգելու վերաբերյալ, կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N2 հավելվածով՝ «Մատակարարման ժամանակացույց»-ով, թիվ 4-րդ չափաբաժնով նախատեսված 10000 հատ «Բաժակ պլաստիկ, թիվ 5-րդ չափաբաժնով նախատեսված 10000 հատ «Ափսե պլաստիկ-1» և թիվ 6-րդ չափաբաժնով նախատեսված 10000 հատ «Ափսե պլաստիկ-2» ապրանքատեսակների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով 17.04.2026թ.-ի փոխարեն, սահմանել մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2026թ.-ի մայիսի 17-ը ներառյալ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-6 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Լայթս ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ Վարդանանց 28 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Արդշին բանկ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 2479005294440003 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02933616 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյան | Տնօրեն՝ Գ.Խանվելյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |